

Սմբատ Խ. Հովհաննիսյան  
Պատմ. գիր. թեկնածու

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ցեղասպանությունների աստիճանակարգման հիմնախնդիրն  
ըստ Պիեռ Նոռայի\*

### Մուտք

Արդի պատմագիտության բազմաթիվ կերպափոխությունների համապատկերում իր ուրույն տեղն ունի պատմության և հիշողության հարաբերակցության հիմնախնդիրը: Կերպափոխությունների նման ակտիվացումը պայմանավորված է տեսական որոնումներով, որոնք կրկին ու կրկին փորձում են պատասխանել պատմագիտության առջև ծառացած մարտահրավերներին:

Մասնավորապես, պատմագիտական հետազոտությունների և տրամա-սույթների (դիմուլական համապատկերում առանցքային նշանակություն են սկսել ձեռք բերել «պատմական քաղաքականություն» (Politique historique), «անցյալի քաղաքականություն» (Politiques du passé), «ինքնության քաղաքականություն» (Politique de l'identité) և «հիշողության քաղաքականություն» (Politique de la mémoire) հղացքները (concept)<sup>1</sup>:

\*Խմբագրությունը համաձայն չէ Պիեռ Նոռայի ազգանվան հայերեն տառադարձության հետ, բայց հարգելով հեղինակի իրավունքները, այս անփոփոխ է թողել: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 13.03.2013:

1. Տես **M. Halbwachs**, *Les Cadres Sociaux de la Mémoire*, Ed. Albin Michel, Paris, 1994; **M. Halbwachs**, *La Mémoire collective*, Paris, PUF, 1968; **Mémoire et Histoire**: la Résistance, sous la direction de Jean-Marie Guillon et Pierre Laborie, Editions Privat, 1995; **A. Baddeley**, *La mémoire humaine*, Presses Universitaires de Grenoble, Grenoble, 1993; **J.-P. Changeux**, *L'Homme neuronal*. Paris: Fayard, 1985; **P. Ricoeur**, *La Mémoire, l'Histoire, l'Oubli*, Paris: Le Seuil 2000; **J. Le Goff**, *Histoire et Mémoire*, rééd., Paris, Gallimard, 1988; **F. Hartog, J. Revel**, (dir.) *Les usages politiques du passé* Paris, Éditions de l'EHESS, «Enquêtes», 2001; **Cl. Andrieu, M.-Cl. Lavabre, D. Tartakowsky**, (dir.) *Usages politiques du passé dans la France contemporaine*, Aix-en-Provence: Publications de l'Université de Provence, 2006; **P. Hutton**, *History as an Art of Memory*, Hanover and London: University Press of New England, 1993; **F. Yates**, *The Art of Memory*, Chicago: University of Chicago Press, 1966; **K. Tilman, F. van Vree, Jay Winter**, (Eds.) *Performing the Past: Memory, History, and Identity in Modern Europe*, Amsterdam: Amsterdam University Press, 2010; **P. Nora** (dir.), *Les Lieux de mé-*

**«Հիշողության»** մասին առավել տարածված այս հայեցակարգերը ներգործում են հետազոտական ծրագրերի և պատմագիտական իխմանականի հիմնական ծրագրերի վերլուծության վրա: Եվ պատահական չէ, որ դրանք իրենց ազդեցությունն են թողնում նաև համապատասխան քաղաքական հանձնարարականների վրա: «Հիշողության» տեսությունները համադրում են այնպիսի հղացքներ, որոնց ծիրում հնարավոր է որոշակիացնել «հիշողության» և «պատմության» փոխհարաբերությունը: Դրանցից են «**հիշողության տեղանք**» (Lieu de mémoire), «**հուշակոթող**» (mémorial) և «**պատմական գիտակցություն**» (La conscience historique) հղացքները<sup>2</sup>: «Հիշողության» և «պատմության» փոխհարաբերությունների մասին հայեցակարգերը ներառում են միմյանց հետ մրցակցող և հակասական տեսակետներ ու ընկալումներ: Այսպիսով՝ հետազոտությունների և տրամասույթների մեջ առկա են համադրական և հակադրական միտումներ:

Նման համադրական և հակադրական մեկնաբանությունների վառ օրինակ են Ֆրանսիայում **Հայոց ցեղասպանության** ժխտման օրինագծի<sup>3</sup> առթիվ ծագած գիտական բանավեճերը: Բանավեճեր, որոնց մեջ ուշագրավ է Ֆրանսիայի Ազադեմիայի անդամ և «Ազատություն հանուն պատմության» (Liberté pour l’Histoire) կազմակերպության նախագահ Պիեռ Նոռայի հայեցակարգն ընդդեմ «հուշային օրենքների» (lois mémorielles): Փորձենք ընդհանուր գծերով և մի քանի հիմնական շեշտադրումներով վերլուծել Ֆրանսիայում **Հայոց ցեղասպանության** ժխտման քրեականացման օրինագծի վերաբերյալ Պիեռ Նոռայի հայեցակարգը՝ դիտարկելով այն մի կողմից՝ «հիշողության և պատմության» մասին նրա տեսության, մյուս կողմից՝ ընդհանրապես պատմության և հիշողության վերաբերյալ տեսությունների համապատկերում:

Անրաժեշտ սկզբանադրյուրները վերցրել ենք Պ. Նոռայի մի քանի ելույթներից ու հոդվածներից<sup>4</sup>:

moire, Gallimard (Bibliothèque illustrée des histoires), Paris, 3 tomes: t. 1 La République (1 vol., 1984), t. 2 La Nation (3 vol., 1986), t. 3 Les France (3 vol., 1992); **K. Hodgkin, S. Radstone**, (Eds.) Contested Pasts: The Politics of Memory (Memory and Narrative), London and New York: Routledge, 2003; **P. Gathercole, D. Lowenthal**, (Eds.) The politics of the past, (One World Archaeology), London and New York: Routledge, 2004; **H. Копосов**, Память строгого режима: История и политика в России. – М.: Новое литературное обозрение, 2011; և այլն:

2 Տես **J. Scherrer**, Zum öffentlichen Umgang mit Geschichte in Deutschland und Frankreich, [http://www.centargrad.com/materials/reader2009/Reset/Reading\\_materials\\_5\\_Jutta\\_Renata\\_seminar/J.\\_Scherrer.pdf](http://www.centargrad.com/materials/reader2009/Reset/Reading_materials_5_Jutta_Renata_seminar/J._Scherrer.pdf) (28.04.2012).

3 Տես **Loi no 2001-70** du 29 janvier 2001, JO no 25 du 30 janvier 2001.

4 Տես **P. Nora**, Loi sur les génocides: une bataille perdue, pas la guerre, URL: [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr) (17.06.2012); **Պիեռ Նորա**: «Историки поняли, что законы – очень опасная вещь» URL: <http://urokiistorii.ru/current/view/2010/31/nora-ui> (26.01.2013); **P. Nora**, Historical identity in trouble”, URL: [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=152&Itemid=182&lang=en](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=152&Itemid=182&lang=en) (13.01.2013).

## 1. Պատմության և հիշողության հարաբերակցության հիմնախնդրի տեսական հիմքերը

Արդի պատմագիտության այլակերպման համապատկերում ի հայտ են եկել բազմաթիվ նոր հետազոտական տրամասույթներ, որոնք փոխկապակցված են «պատմական հիշողություն» հղացքի հետ: Նկատենք, որ հիշողություն՝ իրք մարդկային իմացության սկզբնաղբյուր, հայտնի էր դեռ հին հունական առասպելաբանության մեջ՝ **Մսեմողինե** անվամբ (մուսաների մայր, գիտությունների և արվեստների հովանավոր): Պլատոնը և Վերածննդի դարաշրջանի նորպատոնականներն այս սահմանում էին իրք արքետիպերի մասին գիտելիք, որը հիմնված է մարդկային երևակայության և անդրանցական (transcendental) տիեզերքի (կոսմոս) իդեալական ձևերի համապատասխանության վրա<sup>5</sup>: Ընդհանուր առմամբ՝ հիշողության ողջ եզրարանության համար բնութագրական է բազմիմաստությունը: Դա հատկապես ավելի ակտիվ դրսորվեց 1980-ական թվականներին, երբ «հիշողության» մասին քննարկումները նոր թափ ստացան: Ընդսմին՝ հետարդիական (պոստմոդեռն) պատմագիտության համապատկերում այս հղացքը ձեռք է բերում առանցքային նշանակություն, մասնավորապես, երբ հիշողություն այլևս գնահատվում է իրք «**ընտրողական և մեկնողական գործընթաց**» և ոչ պարզապես՝ «**տեղեկատվության պահիվ պահպանում**»<sup>6</sup>:

Այլ կերպ ասած՝ պատմության առարկան այսուհետ ոչ թե պարզապես անցյալի իրադարձություններն են՝ իրք այդպիսիք, այլ **հիշողությունը** դրանց մասին: Ինքնին «հիշողություն» հղացքը կիրառվում է իրք «մարդկանց կողմից համատեղ ապրված ընդհանուր փորձառություն», իսկ «պատմական հիշողություն» էլ իր հերթին՝ «կողեկտիվ հիշողություն»: Արդ՝ փորձենք հստակություն մտցնել մեր եզրարանության մեջ՝ ներառյալ «հիշողություն», «կողեկտիվ հիշողություն», «պատմական հիշողություն», «հիշողության տեղանք», «հիշողություն և պատմություն» հասկացությունները, քանի որ հենց վերջիններս էլ քանավեճերի բուն թեման են: Որպես հետազոտության տեսական հիմք ընտրել ենք **Մ. Ալբարսի, Պ. Նոռայի և Պ. Ռիկորի** տեսությունները, որոնց համապատկերում ավելի հստակ են պատմության և հիշողության փոխհարաբերությունների լարումներն ու հակասությունները:

«Պատմական հիշողության» տեսության հիմնադիրը համարվում է **Մ. Ալբարսը** (1877-1945), ով առաջներից մենք էր, որ հետազոտության հիմնախնդիր դարձեց «կողեկտիվ հիշողությունը»<sup>7</sup>: Մ. Ալբարսի տեսության առանցքային հիմնադրույթը, որն առկա է նրա բոլոր աշխատություններում՝ **հիշողության սոցիալական պայմանավորվածությունն** է: Այլ կերպ ասած՝ մարդկության ողջ հիշողությունը սոցիալական է, և

5. Տե՛ս F. Yates, Selected Works. Volume III, The Art of Memory, London and New York: Routledge, 1999, pp. 36-37.

6. J. Foster, Memory: A Very Short Introduction, Oxford University Press, 2009, p. 6.

7. M. Halbwachs, Les Cadres Sociaux de la Mémoire, Paris: Félix Alcan, 1925, Rééd. Paris, Ed. Albin Michel, 1994; M. Halbwachs, La Mémoire collective, 1950, Rééd. Paris, PUF, 1968.

անհատական իշխողության գործառումն անհնար է առանց կոլեկտիվ իշխողության.

«Հիրավի, կարելի է առանձնացնել երկու հիշողություն, որոնցից մեկը կարելի է, եթե կուգեք, անվանել ներքին, իսկ մյուսը՝ արտաքին, կամ առաջինը՝ անձնական հիշողություն, երկրորդը՝ սոցիալական հիշողություն: Ավելի ճշգրիտ ասած՝ կենսագրական հիշողություն և պատմական հիշողություն: Առաջինն օգտագործում է երկրորդը, քանի որ մեր կյանքի պատմությունը ընդհանուր պատմության մասն է: Բայց երկրորդը, բնականարար, ավելի ընդարձակ է, քան առաջինը: Մյուս կողմից՝ այն մեզ անցյալը ներկայացնում է միայն հակիծ և սխեմատիկ ձևով, այն դեպքում, եթե մեր կյանքի մասին հիշողությունը ավելի շարունակական և ավելի քանաքը պատկեր է»<sup>8</sup>:

Ըստ որում՝ կոլեկտիվ հիշողությունը կառուցվում է անհատական հիշողության մեջ և չի կարող գոյություն ունենալ նրանից դուրս: Միևնույն ժամանակ պատմական հիշողությունը չի միախառնվում անհատական հիշողությանը: «Այս զարգանում է համաձայն իր օրենքների, և եթե որոշ անհատական հուշեր նաև երբեմն ներթափանցում են նրա մեջ, ապա կերպափոխվում են. հենց միախառնվում են ամբողջին, որն արդեն անձնական գիտակցություն չէ»<sup>9</sup>:

Այստեղից էլ բխում է Մ. Ալբարսի մյուս կարևոր տեսական դիրքորոշումը **հիշողություն-պատմություն** հիմնախնդրի շուրջ: Նա առաջադրում է հիշողության և պատմության սահմանային հակադրության, «կենդանի հիշողության» ու «պատմական հասկացությունների շրջանակի» միմյանց հակադրելու հղացքը: Նման հակադրմամբ Մ. Ալբարսն ընդգծում է, որ իրադարձության մասին հանրույթի «կենդանի հիշողությունը» տարրերվում է նույն այդ իրադարձության մասին «պատմական գիտելիքից». առաջին դեպքում իրադարձությունը պահպանվում է իբրև խմբի ինքնության տարր, իսկ երկրորդ դեպքում ոչ: Այստեղից էլ հետևյալ պնդումը.

«Մեր իշղողությունը հենվում է ոչ թե ստվրած (l'histoire apprise), այլ ապրված (l'histoire vécue) պատմության վրա: Այստեղ «պատմության» ներքո հարկ է հասկանալ ոչ թե իրադարձությունների և տարբերվերի ժամանակագրական հաջորդականությունը, այլ այն ամենը, ինչն առանձնացնում է մի շրջափուլը մյուսից, և որի մասին գրքերն ու պատմագրույցները (récits) մեզ ընդհանուր առմամբ ներկայացնում են միայն շատ սխեմատիկ և անհարժեք պատկեր»<sup>10</sup>:

Հստ այսմ՝ Մ. Ալբարսի դիրքորոշումը կողեկտիվ հիշողության և պատմական գիտակցության փոխարաբերությունների մասին պարունակում է մի շատ էական նորերանգ։ Հստ ‘սրա’ ակնհայտ է, «որ կողեկտիվ հիշողությունը չի համընկնում պատմության հետ, և որ «պատմական հիշողություն» արտահայտությունը շատ անհաջող է ըստրված, քանի որ այն կապակցում է երկու եզրեր, որոնք շատ հարաբերություններում հակադրվում են ավելի քան մի կետում»<sup>10</sup>։ Ավելի կոնկրետ՝ «պատմությունը սովորաբար սկսվում է այս կետում, որ ավարտվում է ավանդություն, այն պա-

<sup>8</sup> M. Halbwachs, *La Mémoire collective*, 1950, Rééd. Paris, PUF, 1968, p. 37.

<sup>9</sup> **Ibid.**, pp. 36.

<sup>10</sup> *Ibid.*, La Mémoire collective, pp. 43–44.

11 **Ibid.**, p. 68.

իին, երբ մարում կամ քայրայվում է սոցիալական հիշողությունը»<sup>12</sup>: Այլ կերպ ասած՝ կոլեկտիվ հիշողությունը ստեղծում է անցյալի և ներկայի կապը, այն դեպքում, երբ պատմությունը քանդում է տվյալ ժառանգականությունը: Այն է՝ եթե հիշողությունը, ըստ Մ. Ալբարսի, **հաստատում է անցյալի և ներկայի նմանությունը, ապա պատմությունը, ընդհակառակը, հաստատում է անցյալի և ներկայի միջև տարբերությունը:**

Ըստ այդմ «Պատմությունը փոփոխությունների պատկեր է», և «քանի որ պատմության համար ամեն ինչ կապակցված է, այդ փոխակերպումներից յուրաքանչյուրը պետք է հակազդի սոցիալական մարմնի մյուս մասերին և նախապատրաստի, այսին կամ այստեղ, նոր փոխակերպումները»<sup>13</sup>: Իսկ «կոլեկտիվ հիշողությունը նմանությունների պատկեր է», և «քանի որ խումը միշտ նույն է, անհրաժեշտ է, որ փոփոխությունը լինի ակնհայտ. փոփոխությունները, այն է՝ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել խմբի մեջ, լուծվում են նմանությունների մեջ, այնպես, որ կարծես նրանց դերն է զարգացնել ինքնության բովանդակության տարրեր դիտանկյունները՝ ինքնին խմբի տարրեր արմատական գծերը»<sup>14</sup>: Ընդհանուր առմամբ, ինչպես նկատում է և Պոլ Ռիկուրը (Paul Ricoeur), Մ. Ալբարսն ընդգծում է պատմության երկու տարրերակիշ առանձնահատկությունները<sup>15</sup>: **Առաջին՝** «կենդանի հիշողության շարունակականությանը (continuité)» հակադրվում է պատմական գիտակցությանը հասուկ՝ «պարբերականացման աշխատանքով եզրափակված ընդհատությունը (discontinuité)»: Ըստ այսմ պատմության կիզակետում միայն տարրերություններն ու հակադրություններն են, իսկ կոլեկտիվ հիշողության կիզակետում՝ նոր սոցիալական հաստատությունների ամրապնդման հիմնախնդիրը: **Երկրորդ՝** գոյություն ունեն բազմաթիվ կոլեկտիվ հիշողություններ այն դեպքում, երբ «պատմությունը մեկն է»:

Եվ քանի որ Մ. Ալբարսի տեսության մեջ ավելի ակտիվ էր տարրերակիշ գործառական հատկանիշը, ուստի «պատմություն» և «հիշողություն» հղացքները ներքուստ հատկողուշվում և հակադրվում են միմյանց՝ աչքաթող անելով փոխանչությունների հիմնախնդիրը: Պ. Հարոնի դիպուկ բնորոշմամբ՝ քանի որ Մ. Ալբարսը հավատում էր, «որ պատմությունը սկսվում է այստեղ, որտեղ ավարտվում է կենդանի հիշողությունը», երբեք «բավականաչափ չի խորհել դրանց փոխկապակցվածության շուրջ»<sup>16</sup>: **Այսպիսով՝ «պատմության» և «հիշողության» ալբարսյան տեսությունը կարելի է ներկայացնել իրեն հիշողութենական և պատմական ոլորտների տրոհված իրականություն, որը բնորոշվում է իրական լինելու հատկանիշի պակաս ներխստացվածությամբ:**

1980-ական թվականների հետազոտություններում, սակայն, ավելի են ընդգծվում պատմության և հիշողության հետազոտությունների տարրերությունները: Դրանց սույն խիստ սահմանազատումը կարող էր վերացական

12 *Ibid.*, p. 69.

13 *Ibid.*, pp. 77-78.

14 *Ibid.*, pp. 78.

15 Տե՛ս P. Ricoeur, *La Mémoire, l'Histoire, l'Oubli*, Paris: Le Seuil 2000, p. 516.

16 P. Hutton, *History as an Art of Memory*, Hanover and London: University Press of New England, 1993, p. 77.

բնույթ կրել:

Ուստի պատահական չէ, որ ֆրանսիացի պատմագետ և սոցիոլոգ Պիեռ Նորան (Pierre Nora), Մ. Ալրվարժի հետքերով սահմանազատելով պատմությունն ու հիշողությունը, շեշտում է դրանց «արմատական հակադրության» փաստը<sup>17</sup>: Այս է՝ ընդգծում է դրանց բախման իրողությունը<sup>18</sup>: Վյու՛ հիացականացնելով «պատմություն»/«հիշողություն» հիմնախնդիրը՝ նա նորագոյն պատմությունը գետեղում է բանավոր ավանդույթի և հետարդիսական պատմագրության միջև<sup>19</sup>: Ըստ այդմ՝ Պիեռ Նորան պնդում է, որ նորագոյն պատմությունը փորձել է տիրանալ հավաքական հիշողությանը: Արդյունքում փոխվել է ոչ միայն հիշողությունը, այլև պատմությունը: Հետազոտական այս ընթացքն «արմատական վերամշակման» է ենթարկում Մ. Ալրվարժի տեսությունը և առաջադրում նորը<sup>20</sup>:

Իր «Պատմության և հիշողության միջև. հիշողության տեղանք»<sup>21</sup> հոդվածում Պ. Նոռան փորձում է պատմությունը գրելու նոր ուղիներ գտնել, որոնք կենտրոնացած կլինեն ոչ թե որոշակի իրադարձությունների, այլ դրանց մեկնաբանությունների ու տարրերությունների վերհանման վրա: Այսու՝ սկսելով «հիշումից» (commemoration)՝ նա աստիճանաբար հանգում է հիշողությանը, ապա հիշողության և պատմության փոխհարաբերությունների հիմնախնդրին: Բնչական Պ. Ռիկյորն է նկատել<sup>22</sup>, ընդհանուր առմամբ, Պ. Նոռայի տեսության մեջ պատմության և հիշողության փոխհարաբերություններն առանձնանում են թեմատիկ երեք ոլորմով.

- **առաջին**, հիշողության և պատմության միջև ի հայտ եկած խզումը, հիշողությունը, որ «միայն պատմություն, հետք և ընտրություն» է, կորցրել է «պատմության ու հիշողության համապատասխանությունը»<sup>23</sup>:
  - **երկրորդ**, պատմություն-հիշողության կորուստը. «Հիշողության մասին խոսում են, որպեսի այն այլսա գոյություն չունի»<sup>24</sup>:
  - **երրորդ**, պատմության և հիշողության միջև առաջացած խզումից և պատմության-հիշողության կորստից հետո ի հայտ է գալիս հիշողության մի նոր տարատեսակ՝ «պատմությամբ կալանված հիշողությունը»<sup>25</sup>.

Այս համապատկերում Պ. Նոռայի համար հիշողությունն անձամբ ապրած փորձառությունն է: Կենդանի հիշողությունը գտնվում է այլացման

<sup>17</sup> Stéphane P. Nora, Entre la mémoire et l'histoire: Les Lieux de Mémoire, dans Pierre Nora (dir.), Les lieux de mémoire. La République. Paris. Gallimard. 1984. p. XVII.

<sup>18</sup> **Stu M. Kreyling**, *The South that Wasn't There: Postsouthern Memory and History*, Baton Rouge: Louisiana State University Press, 2010, p. 19.

19 S<sup>t</sup>u P. Hutton, op. cit., p. 150.

20 Slav N. Wood, *Vectors of Memory: Legacies of Trauma in Postwar Europe*, Oxford and New York: Berg 1999, p. 17.

<sup>21</sup> P. Nora (dir.), *Les lieux de mémoire. La République*, Paris, Gallimard, 1984.

21. **P. Ricoeur** (մ.), *Եօնականութեան համար*, Փարիզ, Սամսուր, 1964.

22. **Տևակ P. Ricoeur**, op. cit., pp. 523–525. «Խզումը, որի մասին խոսում էնք, հիշողության և պատմության հզրումն է։ Կորուսդը այս բանի կորուսան է, որ կոչվում է «պատմություն-հիշողություն»։ Նոր երևոյթը փուլն է «պատմության զավթած հիշողության» (**P. Ricoeur**, op. cit., p. 523)։

<sup>23</sup> **Nora Pierre** (dir.), op. cit., I, p. XVIII.

23 **Nora Flente** (

<sup>25</sup> *Ibid.*, p. XXV.

մեջ, բաց է վերիիշման և մոռացման տրամախոսության առաջ և գոյություն ունի ներկայում: Պատմությունը, ձիշտ հակառակը, միշտ խնդրահարույց և անլիարժեք վերակառուցումն է այն բանի, որն արդեն անցյալում է.

«Հիշողությունը միշտ արդիական ֆենոմեն է՝ հավերժ ներկայի հետ վերապրվող կապ: Խոկ պատմությունը անցյալի ներկայացումն է: Հիշողություն իր զգայուն և մողական բնույթի բերումով գոյակցում է միան այն մանրամասների հետ, որոնք իրեն հարմար են: Նա սնվում է մշուշոտ, բազմապլան, համբնդգրկուն և ընթացիկ, մասնակի կամ խորհրդանշական հիշողություններով, զգայուն է բոլոր փոխանցումների, արտապատկերումների, արգելուների, պրոյեկցիաների նկատմամբ: Պատմությունը որպես ինտելեկտուալ և աշխարհիկ գործողություն, հետազոտման և քննադատական տրամասույթի է կոչում:

Հիշողությունը տեղավորում է հուշերը սրբազնի մեջ, պատմությունը վտարում է նրան այդտեղից՝ դարձնելով պրոզայիկ: Հիշողությունը ծնվում է այն սոցիալական խմբում, որին նա միավորում է: Դա վերադանում է մեզ նրան, որ, Ալբարսի խոսքերով ասած՝ գոյություն ունեն նույնան հիշողություններ, որքան և սոցիալական խմբեր, այն գաղափարին, որ հիշողությունն իր բնույթով բազմակի և անբաժանելի է, կողեկտիվ և անհատական: Ի տարրերություն դրա՝ պատմությունը պատկանում է բոլորին և ոչ որի, ուստի ունի համբնդիանուր ճանաչում: Հիշողությունն արմատավորված է կրնկրեսի՝ տարածության, ժեստի, պատկերի և առարկայի մեջ: Պատմությունը կենում է բացառապես ժամանակային տևողության, առարկաների փոխակերպության և առարկաների հարաբերությունների մեջ: Հիշողությունը բացարձակ է, խոկ պատմությունը գիտի միայն հարաբերականը»<sup>26</sup>:

Այստեղից էլ՝ «ոչչացված կամ խլված անցյալի հետքերով» եղելության վերականգնումը այսպես կոչված՝ «հիշողության տեղանքի» (les lieux de mémoire) միջոցով. «Հիշողությունից դեպի պատմություն, մեր նախնիների աշխարհից դեպի մեզ ստեղծողի նկատմամբ պատահական հարաբերության աշխարհ տատանումը, տոտեմական պատմությունից քննադատական պատմության անցումը. սա հիշողության տեղանքի ժամանակն է: Արդեն չեն փառարանում ազգը, այլ ուսումնասիրում են դրա փառարանումները»<sup>27</sup>: Ընդ որում՝ «հիշողության տեղանքը» ի հայտ է գալիս ի հակադրություն հիշողության պատմական շրջափուլերի, ինչպես նաև փոխարինելով իսկական (autentic) և անմիջական «կողեկտիվ հիշողությանը»: Իր մեկ այլ հոդվածում Պ. Նոռան ծշգրտում է. «Հիշողության տեղանքը մնացորդն է, [...] որում հիշումային (commemoration) գիտակցությունը գոյություն ունի պատմության մեջ»<sup>28</sup>: Այսիայտ է, որ նման փոխարերության կիրարկմամբ Պ. Նոռան փորձում է տարանջատել պատմությունն ու հիշողությունը՝ իմասնալու համար դրանց շաղկապվածության արմատները<sup>29</sup>: Այս առումով «հիշողության տեղանքը» ի հայտ է գալիս իբրև խզում և կորուստ.

26 *Ibid.*, pp. XVII–XVIII.

27 *Ibid.*, p. XXV.

28 Gauchet Marcel, L’élargissement de l’objet historique, dossier “Inquiétudes et certitudes de l’histoire”, Le Débat, 1999, N 103, janv.–fév.

29 Stein P. Nora (dir.), op. cit., I, p. XVII.

«Հիշողության տեղանքի նկատմամբ հետաքրքրությունը, ուր հիշողությունը բյուրեղանում և գտնում է իր ապաստարանը, կապված է [...] անցյալի հետ խզումի գիտակցմանը [...], բզկտված հիշողության զգացողությանը [...]: Բայց այդ խզումը ընդունակ է առաջադրելու նրա որոշակի տեղանքում նրա մարմնացման մասին հարցը, որտեղ ներկա է պատմության անխօնիության զգացողությունը»<sup>30</sup>:

Ըստ որում եթե նախկինում «հիշողության տեղանքի» միջոցով հնարավոր էր հաղորդակցությունը «կենդանի ավանդույթների» հետ, ապա այժմ դրանք սույն ակնարկներ են առ այն, թե ինչ կարող էին լինել այդ ավանդույթները: Այն է՝ հիշողությունը, որը «միայն պատմություն, հետք և ընտրություն» է, կորցրել է «պատմության ու հիշողության համապատասխանությունը»<sup>31</sup>: Իսկ երբ «հայտնվում է հետքը, հեռավորությունը, միջնորդությունը, մենք այլևս ոչ թե իսկական հիշողության, այլ պատմության մեջ ենք»<sup>32</sup>: Այլ կերպ ասած՝ «Տիրանալով հիշողությանը՝ պատմությունը նյութականացրել է այն»<sup>33</sup>: Արդյունքում՝ «Հիշողության տեղանք գոյություն ունի, քանի որ այլևս չկան հիշողության տցիալական շրջանակները»<sup>34</sup>:

Պատմության և հիշողության հակադրության՝ Պ. Նոռայի տեսական կառուցման մեջ, ինչպես դիպոլի նկատել է Պ. Հաթոնը, ուշագրավ է այն, որ «Հիշողության ուժն այսօր [...] ոչ թե բարոյական ազդեցության մեջ է, այլ դրա նյութական մնացորդների»<sup>35</sup>: Ըստ որում, համաձայն «հիշողության տեղանքի» նախագծի՝ հետազոտվող առարկաները պետք է «կառուցվեն» իբրև տեղեր: Այն է՝ պատմագետը պետք է մեկնարկի առարկայի արտապատմական իրականությունից և գտնի «խորհրդանշական իրականությունը և վերաբարձնի հիշողությունը»: Հաջողությունը կախված է հեղինակի՝ «խորհրդանշական ամբողջը խորհրդանշական բեկորներին կապակցելով» ունակությունից: Այլ կերպ ասած՝ արդի հիշողությունը, որը կերպափոխվել է պատմության միջոցով, կապակցված է գրությանը, որն արդեն «արխիվի» հիշողություն է: Ըստ որում «հիշողության թատրոնը» (արխիվը) դարձել է շոշափելի իրականություն, որում «պատմաբանները մարմնավորել են այն անցյալը, որը ցանկացել են հիշել»<sup>36</sup>:

Այսպիսով՝ Պ. Նոռայի տեսության մեջ թեպետ ավելի ակտիվ է դրսւորվում պատմության և հիշողության հակադրության, քախման հատկանիշը, միևնույն ժամանակ հիշողութենական և պատմական ոլորտների համադրման կիզակետում վերցված «հիշողության տեղանքը» հանդես է գալիս իբրև միջուրտային լծորդման հանգույց: Հանգույցը, սակայն, մեկնարանվում է որպես հակադրության գործոն՝ իր կալանված-վերակերպված բնույթով: Պատմության և հիշողության նման հակադրում-տրոհումը ևս մի քայլ էր դեպի նրանց տարբերակումը: Դրանց միավորումը, ինչպես նաև հակադրությունների միասնություն ներկայացնող պատմական իրա-

30 P. Nora, Comment écrire l'histoire de France, – dans Nora Pierre (dir.), Les lieux de mémoire, t. III, Les France, vol. 1, Conflits et partages, Paris, Gallimard, 1992, p. 24.

31 P. Nora (dir.), op. cit., I, p. XVIII.

32 Ibid., p. XIX.

33 P. Hutton, op. cit., p. 150.

34 P. Nora (dir.), op. cit., I, p. XVII.

35 P. Hutton, op. cit., p. 150.

36 Ibidem.

կանության հայտնաբերումը կատարվում է պատմագիտական այլ տեքստերում: Մի բան, որի լավագույն ներկայացուցիչներից է Պոլ Ռիկյորը:

Պոլ Ռիկյորը հիշողության և պատմության փոխարարերակցության հիմնախնդիրը մասնավորապես քննել է իր «**Հիշողություն, պատմություն, մոռացում**» կոթողային աշխատության մեջ<sup>37</sup>: Իր տեսությունը զարգացնելիս նա ևս մեկնարկում է հիշողության և պատմության տարբերակում, համաձայն որի՝ «հիշողությանը հատուկ է ինքն իր վրա կենտրոնացածությունը, պատմությանը հատուկ է կողմնորոշիչների և գնահատականների ոլորտի ընդլայնման ձգտումը»<sup>38</sup>: Իսկ իր խնդիրը հեղինակը ձևակերպում է իրուս «հիշողության պաշտպանական», որը հանդես է գալիս «որպես պատմության մատրիցա, որքանով մնում է ներկայի՝ անցյալի հետ ներկայացուցչական (représentatif) հարաբերության հիմնախնդիրի պահապան»<sup>39</sup>: Այսպիսի հարաբերության դեպքում, ըստ Պ. Ռիկյորի, «ի հայտ է գալիս այդ պաշտպանական ձառը պատմության դեմ հիշողության բողոքի փոխակերպելու գայթակղությունը»: Մի բան, հընթացս որի հետագայում հարկ կլինի դիմադրել «հիշողությունը՝ ի թիվս նրա «նոր առարկաների», պատմության պարզ առարկայի վերածելու»<sup>40</sup> հակառակ գայթակղությանը:

Պ. Ռիկյորին նախ և առաջ հետաքրքրում է հիշողությունն իրուս ինքն իրեն իրականացնելու ընդունակություն, իրուս անցյալի հետ գիտակցված հարաբերություն պահելու ուժ: Որքան էլ գրավիչ լինեն խզումների, մոռացման և հիշողության կորստի (ամսեղիայի) թեմաները, մոռացումն իրուս հիշողության իսկական հիմք դիտարկելը նշանակում է անցյալի ծշմարտության ցանկացած հետազոտություն առ ոչնչի հանգեցնել: Ուստի Պ. Ռիկյորի համար կարևոր է այն պնդումը, որ անցյալի մասին մենք չունենք ավելի լավ վկայություն, քան է հիշողությունը<sup>41</sup>: Ըստ նրա՝ «Հիշողությունը լեզվի՝ որպես արտահայտվելու ձևի, [ինչպես նաև] պատմելու կարիք ունի: Հետևաբար հիշողությունը իրադարձությունների վկայության դեր է կատարում, որոնք տեղի են ունեցել ժամանակի մեջ, իսկ պատմելը թույլ է տալիս կառուցակազմել հիշողությունը»<sup>42</sup>: Ընդ որում հիշողությունն ի սկզբանե ներառված է մեր գիտելիքի մեջ, իսկ հիշողության մեջ ներառված է հարաբերությունն անցյալի նկատմամբ, որին իրավունք է տրված համաներկա լինելու ներկայի և գալիքի հետ: Պ. Ռիկյորը հիշողության այս կողմնորոշումը ձևակերպում է իրուս «արդարացի հիշողության» քաղաքականություն։ «Ինձ չի դադարում հուզել այն տեսարանը, երբ մի դեպքում չափազանց տարվում են հիշողության հարցերով, մյուս դեպքում մոռացման, և ոչ մի խոսք՝ հիշատակումի և հիշողության կամ մոռացման ի չարք գործադրելու ներգործության մասին: Արդարացի հիշողության (juste mé-

37 Стю P. Ricoeur, La Mémoire, l’Histoire, l’Oubli, Paris: Le Seuil, 2000.

38 **Интервью с профессором Полем Рикером:** К изданию в России книги «Память, история, забвение»; в книге П. Рикер, Память, история, забвение, М., Издательство гуманитарной литературы, 2004, с. 9.

39 P. Ricoeur, Op. cit., p. 106.

40 Ibid., p. 106.

41 Стю Ibid., op. cit., p. 24–25.

42 **Интервью с профессором Полем Рикером,** с. 8.

moire) քաղաքականության մասին գաղափարը այս իմաստով կարևոր թեմաներից մեկն է, որի հետազոտությունը ես համարում եմ իմ քաղաքացիական հանձնառությունների թեմաներից մեկը»<sup>43</sup>: Ուշագրավ է, որ «արդարացի հիշողություն» հեղացը Պ. Ռիկյորը բխեցնում է «անհատական և կոլեկտիվ հիշողություններ» հեղաքից: «Անհատական և կոլեկտիվ հիշողությունը, որը նպաստում է անձնական ինքնության ձևավորմանը, ծնունդ է արդարացի հիշողության խնդիրը: Իսկ արդարացի հիշողություն հասկացությունը իմաստ է ձեռք բերում հիշողության տարրեր ձևերի համադրման արդյունքում»<sup>44</sup>:

Այս համապատկերում էլ ի հայտ է գալիս «արդարացի հիշողության» ու պատմության հիմնախնդիրը, չնորիկվ որի՝ դրանք լօրդվում են միմյանց: Հիշումը՝ իբրև հետազոտություն, տեղիք է տալիս տարրեր մոռեցումների և, համապատասխանաբար՝ անցյալի տարրեր վարկածների: Ուստի նախապատրաստվում է հիշողության էթիկական մեկնաբանությունը, որը կարողանա մի կողմից՝ հակադրվել պատմության տարրեր եսասիրական (անձնական, խմբային, ազգային) վարկածների «օրյեկտիվ ճշմարտությանը», մյուս կողմից՝ պահպանել հավատարմությունը պատմության մեջ «բացակա» ձայնին (նախ և առաջ՝ նրա զիերին, որոնցում հույսին «անցյալը» պահպանվում է իբրև գիտակցված այլընտրանք ներկային, իբրև Ուրիշի հեռանկար): Այստեղից էլ՝ պատմությունը հիշողության այն առանձնահատուկ կերպն է (mode), որն ըստ էության ուղղված է առ Ուրիշը և պահանջում է **արդարություն ուրիշի նկատմամբ**:

Ուրիշի հետ հարաբերության հարցն ըստ էլույան լուծել է դեռ Արխա-  
տոտելին իր «Քաղաքականության» երկրորդ գրքում (ընկերության մասին  
խորհրդածություններում): Մեկնարկելով արխատության այդ ավանդույ-  
թից՝ Պ. Ռիկյորը հնարավոր է համարում հեռանալ անհատական-կոլեկ-  
տիվ հիշողությունների հակադրումից և ընդունել հիշողության հանձնա-  
ռության բաշխման այլ ձևերի հնարավորությունը՝ ներառյալ և հիշողու-  
թյան պատկանելությունը անհատական «ես»-ին, և՝ նրա գոյության մի-  
ջանձնային ձևերը<sup>45</sup>: Ուստի՝ հիշողության սուբյեկտի մասին հարցը չի կա-  
րող վճռվել միակողմանիորեն՝ ոչ հիշողության անհատական բնույթի մա-  
սին պահումով, ոչ էլ նրա կողեկտիվ հիմքի ընդունման միջոցով: Հաս Պ.  
Ռիկյորի՝ այս երկու ծայրահետ կետերում ամրագրված են ոչ այնքան հի-  
շողության էական գծերը, որքան «տրամասույթների» տարրաժանվող մի-  
տումները, որոնք հայտարարում են իրենց հավակնությունները հիշողու-  
թյան նկատմամբ: Սակայն «ոչ անհատական հիշողության ֆենոմենոլո-  
գիան, ոչ կողեկտիվ հիշողության սոցիոլոգիան չեն կարող ամուր հիմքեր  
ունենալ, եթե նրանցից յուրաքանչյուրը համապատասխանաբար արդա-  
րացի է համարում հակադրի դրույթներից միայն մեկը. մի կողմից՝ անհա-  
տական գիտակցության վիճակների հարակցությունը, մյուս կողմից՝ հա-  
վաքական էությունների ունակությունը, որը պահպանում և հորդորում է ք  
ընդհանուր հիշողությունները»<sup>46</sup>:

<sup>43</sup> P. Ricoeur, op. cit., p. I.

44 Интервью с профессором Полем Рикером, с. 9.

<sup>45</sup> P. Ricoeur, op. cit., p. 162.

46 P. Ricoeur, op. cit., p. 152.

Ահա ինչու Պ. Ռիկյորն առաջարկում է ներմուծել մի հասկացություն, որը թույլ կտար հաղթահարել այդ «հակաօրինությունը՝ արտահայտելով հարաբերություն ուրիշի հետ, որը ներկա է «ես»-ի մեջ և դրանով «հանում է նրան «ես ինք» առ «ես ինք» հարաբերությունների շրջանակից»։ Այդ հասկացությունը պետք է դառնա «**հիշողության հանձնառություն**» հասկացությունը։ Նկատենք, որ այդ հասկացության ներմուծմամբ՝ Պ. Ռիկյորը հիշողությունը ձևակերպում է իրեն ինքնակա գործընթաց այն դեպքում, երբ Պ. Նոռայի մոտ այն ներկայացվում է իրեն ավելի սուրյեկտիվ։

Այսպես՝ ըստ Պ. Ռիկյորի՝ «**Հիշողության հանձնառությունը (devoir de mémoire) հուշի (souvenir) միջոցով արդարադատության իրականացման պարտքն է՝ ուրիշի, քան սեփական եսի (soi) նկատմամբ**»<sup>47</sup>։ Արդարադատություն, որը «հիշողության հանձնառությանը տալիս է ապագայի և պահանջի ձև»<sup>48</sup>։

Ըստ որում «**Հիշողության հանձնառությունը չի սահմանափակվում նյութական, սուրբգրային կամ այլ հետքերի պահպանմամբ. այն ներառում է իր մեջ այլոց նկատմամբ պարտականության զգացողությունը, ովքեր [...] արդեն չկան, բայց եղել են: Հարկավոր է հատուցել պարտքը, կասենք մենք, բայց և ենթարկվել ժառանգության գույքագրմանը (inventaire)»<sup>49</sup>։**

Ըստ այդմ «Հիշողության հանձնառությունը՝ իրեն արդարադատության պահանջ, փոխադրվում է մի երրորդ եզրույթի՝ ողքի աշխատանքի և հիշողության աշխատանքի միավորման կետում»<sup>50</sup>։ Արդյունքում արդարադատության հանձնառության միավորված ուժը կարող է տարածվել հիշողության և ողքի սահմաններից անդին՝ մինչև այն նշումը, որը համատեղ կազմավորում է հիշողության ճշմարիտ և գործնական (pragmatique) չափումները։

Այս ամենի համապատկերում ուշագրավ է, սակայն, որ հիշողության հանձնառությունն իրեն արդարադատության հանձնառություն հիմնավորելով՝ Պ. Ռիկյորը նշում է, որ իրնթաց դրա կիրառման՝ հնարավոր են և խախտումներ. «Հիշողության հանձնառությունը միաժամանակ կարող է լինել և հիշողության ճիշտ կիրառման, և նրա չարաշահման բարձրակետ»<sup>51</sup>։ Ըստ որում՝

**«Ենց այնքանով, որքանով հիշողության հանձնառությանը դիմելը սեղուն մտի ախտանիշի գերին է մսում, չի դադարում տատանվել դրա ճիշտ կամ սխալ ընկալման միջև։ Իհարկե, միջոցը, որպիսին հոչակիում է հիշողության հանձնառությունը, կարող է հիշողության չարաշահում թվական՝ նման նրան, ինչը վերը դիմակազերծվեց որպես հիշողության ձեռնածում։ Իհարկե, խոսքն արդեն իշխանության նկատմամբ դիսկուրսի գաղափարախոսական վերաբերմունքի շրջանակներում տեղի ունեցող ձեռնածումների մասին չէ, այլ ավելի նրաց-**

47 P. Ricoeur, op. cit., p. 108. Նկատենք, որ ֆրանսերենում «devoir» նշանակում է «պարտք, պարտականություն, հանձնառություն»։ Նախընտրելի թարգմանությունն այս դեպքում «հանձնառություն»-ն է (պարտքի առանձին ընկալումներից խուսափելու համար)։

48 Ibid., p. 108.

49 Ibid., p. 108.

50 Ibid., p. 107.

51 Ibid., p. 106.

ված ձեռնածումների մասին՝ գիտակցության ղեկավարման իմաստով, որը հոչակում է իրեն զոհերի նկատմամբ արդարության ավետարեր: Զոհերի անբար խոսքի հենց նման յուրացում էլ ստիպում է ճիշտ կիրառումից սխալ կիրառման անցնել»<sup>52</sup>:

Այսու՝ ֆենոմենոլոգիական և էթիկական համագոյությունների կիզակետում էլ Պ. Ռիկյորը կազմակերպում է հիշողության հանդիպումը պատմության հետ՝ առաջին հերթին իրու անցյալի գրառում, վկայությունների արխիվացում և հետո արդեն՝ անցյալի մեկնաբանում-հասկացում: Այստեղից էլ պատմագետի աշխատանքում մեկնաբանման և հասկացման սկզբունքային մերձեցման պնդումը, որտեղ «Պատմագետները ոչ դատավորներ են, ոչ բարոյախոսներ: Պատմության նպատակը հասկանալն է և բացատրելը: Եվ այստեղ հարկ է տրամախոսությամբ մոտենալ իրավագետների, պատմագետների ու գրողների կողմից փաստերը տեսնելու [կերպին]: Միևնույն իրադարձությունը կարող է ն' որակավորվել իրավաչափ կամ հանցավոր, և վերակառուցվել պատմական հետազոտության մեջ, և պատմվել պատմական գրքում: Եվ մոտեցումների ու գնահատականների այս բարդ համակարգում ներկայացված են բարոյականության ու արդարադատության խնդիրները»<sup>53</sup>:

Այսպիսով, Պ. Ռիկյորի տեսության մեջ ավելի ակտիվ է դրսևորվում հիշողության և պատմության փոխսրացական հայեցակերպը: Այս է՝ հիշողության և պատմության պարզ հարաբերության մեջ արդեն իսկ նշմարվող ներունակությունների տարբերությունները իրականությունը թեպետ փոխանցում են տարբեր ուղղություններով, այդուամենայնիվ, հակադրումը կամ բախումը հաղթահարելի է երկխոսության միջոցով: Շնորհիվ որի՝ հիշողությունն ու պատմությունը հանդես են գալիս իրու իրականության փոխադարձ փոխանցող՝ ամրողջի մեջ միասնական ներառվածությամբ:

**Վերս ասվածից** ելնելով՝ կարող ենք ասել, որ հիշողության և պատմության սոսկ հակադրումը չի կարող սպառիչ կերպով ներկայացնել պատմության վիթխարի տիրույթը: Ըմբռնել հիշողության և պատմության փոխսհարաբերությունը նշանակում է ինչ-որ չափով բացահայտել ոչ միայն դրանց տարբերությունն ու հակադրությունը, այլև ու հատկապես՝ համադրական-երկխոսային հեռանկարները: Մինչ այդ հեռանկարների ուրվագծումը հոյս անհրաժեշտ է, որ հիշողությունը, մինչև պատմության վերածվելը, անցնի ինքնահաղթահարման մի շրջափուլ, հընթացս որի այն պետք է ստանա պատմագիտական կառույց: Իսկ ընդհանուր առմամբ՝ իր ողջ բազմազանությամբ հիշողութենական/պատմական ներկայացումը պետք է հանդես գա այն հանգույցում, որում կենտրոնացված են պատմագիտության համար հնարավոր բոլոր կապերն ու անցումները: Այսու՝ ստեղծվում է պատմագիտության ընդգրկուն համադրության հիմքն ու ներունակությունը, որը ներառում է միմյանց մեջ ներթափանցած և միմյանց անդրադանող, անգամ միմյանց ներհակ հարացույցներն ու հայեցակարգերը:

52 Ibid., p. 109.

53 Ինտերվյու ս պրոֆեսոր Պոլ Ռիկերու համար՝ էջ 9-10.

## 2. Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման օրինագծի վերաբերյալ Պիեռ Նոռայի հայեցակարգի քննական վերլուծություն

Ի վերջո մեր հետազոտությունը փորձենք առնչակցել քաղաքական և իրավական տրամադրությունների ու բանավեճերի հետ, ի մասնավորի՝ պատմության և հիշողության հավասարակշռության խախտման և ցեղասպանությունների տարօրինակ «աստիճանակարգի» ի հայտ գալու համատեքստում, մի բան, որին ականատես ենք լինում Հայոց ցեղասպանության ժխտման օրինագծի<sup>54</sup> առթիվ ծագած գիտական բանավեճերում:

Դրանցից մասնավորապես առանձնացնենք ֆրանսիացի պատմագետ և «Ազատություն հանուն պատմության» (Liberté pour l'Histoire) կազմակերպության նախագահ Պիեռ Նոռայի՝ ընդդեմ «հոուշային օրենքների» (lois mémorielles) արտահայտած դիտարկումները<sup>55</sup>, որոնք հետաքրքիր նյութ են տալիս՝ քննարկելու «հիշողության քաղաքականություն» և «պատմության քաղաքականություն» եզրերը: Նկատենք, որ մի կողմից՝ Պ. Նոռան արդարացիորեն կապակցում է ազատության գաղափարը պատմության (հետևաբար և՝ պատմագիտության) ազատության հետ, որտեղ այս մեկնարկը թերևս կարևոր ու հետանկարային է: Մյուս կողմից՝ նրա դիտարկումների մեջ առկա են որոշ մոտեցումներ, որոնք խանգարում են հիշողության և հանձնառության կառուցիկ քննարկմանը: Նախ և առաջ՝ նկատի ունենք ոչ միայն Հայոց ցեղասպանության ժխտման օրինագծի վերաբերյալ նրա դատողությունների չիմսավորվածությունը, այլև հենց Հայոց ցեղասպանության՝ որպես պատմության ժխտումը և ավելին՝ **Հայոց ցեղասպանության և Հրեական Հոլոքոսթի** հակադրումն ու դրանց միջև աստիճանակարգի հաստատումը: Որպեսզի պատկերն ավելի համապարփակ ներկայացնենք, Պ. Նոռայի դատողությունները երբեմն ուղեկցենք ընդարձակ մեջքերումներով:

1. Պիեռ Նոռան իր ելույթներում և հոդվածներում, սեփական դատողություններին ու եզրակացություններին ավելի հիմնավոր օրինականություն հաղորդելու համար, նախ՝ հակադրում է հիշողությունն ու պատմությունը, որտեղ հիշողությունը, մասնավորապես՝ որոշ սցիլալական խմբերի հիշողությունը ստորակարգում է պատմությանը.

«Հիշողությունը պատմությանը հաղորդեց նոր լիցը, նորացրեց անցյալի նկատմամբ մոտեցումներն ու թափանցեց հետազոտության թոլոր շրջափուլերն ու ձյուղերը: Հիմնախնդիրներն ի հայտ են զայիս այն պահից, երբ պատմությունը, որը չի պատկանում ոչ մեկին և կոչված է անցյալը դարձնել համբնդիանուր հասանելի, սկսում է գրվել ընդհանուր անցյալ ունեցող խմբերի ձնշման ներքո, ովքեր ձգտում են արմատավորել անցյալի իրենց սեփական ընթերցումը: Դա հանգեցնում է սկզբունքուն այլ բնույթի փոփոխությունների և սկզբունքորեն այլ

54 Տե՛ս **Loi no 2001-70** du 29 janvier 2001, JO no 25 du 30 janvier 2001.

55 Տե՛ս **P. Nora et le métier d'historien**, «La France malade de sa mémoire», propos recueillis par Jacques Buob et Alain Frachon, *Le Monde* 2, no 105, février 2006; **P. Nora**, Historical identity in trouble”, URL//: [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=152&Itemid=182&lang=en](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=152&Itemid=182&lang=en) (13.01.2013).

**մասշտարի տեղաշարժման:** Մենք պարկեցած իիշողությունից, որը սոսկ ճանաչում, հարգանք է ցանկանում և ուզում է մտնել ազգի կունկութիվ պատմության մեջ պատումի (նարբատիվ) մեջ, անցնում ենք իիշողությանը, որը մեղադրում և ոչնչացնում է այդ պատմությունը: Ըսդհանուր մեկնաբանությունների հետ մեկտեղ փաթաթում է իր կանխակալ և միակողմանի կարծիքը՝ անհամբերությամբ պահանջելով անցյալի իր վարկածին տալ պաշտոնական կարգավիճակ և պատնեշել նրան հանրապետական օրենքի պատով: Պատրաստ հանուն տառապանքի, որը նա շփոթում է ծշմարտության հետ, պնդել իր պահանջները, առանձնապես չմտածելով միջոցների մասին՝ քաղաքական աղանդավորություն, նախընտրական շանտաժ, իսկ եթե հարկ լինի՝ ֆիզիկական սպառնալիք և անձնական թշնամանքներ»<sup>56</sup>:

«Հիշողությունն, ըստ ընորոշման, մաքրում է ժամանակագրական տարրերություններն ու անցումները, փոխակերպությունների գործոններն ու փոփոխությունների պայմանները: [...] Այսօր մենք անկեղծորեն հավատում և ապրում ենք անհատի իրավունքի ստվերում: Շատ հարաբերություններում սա, իհարկե, ուրախալի է, սակայն ինքնին այդ իրավունքներն ունեն երկար պատմություն: Ստացվել է այնպես, որ հիշողությունն աննկատ միայնուվել է բարոյականությանն ու կլանել պատմությունը»<sup>57</sup>:

Այստեղ տեղին է Պ. Հաթոնի դիտարկումը, համաձայն որի՝ Պ. Նոռայի համար «ամենահետաքրքիրն անցյալի իրադարձությունները չեն, այլ ավելի շուտ դրանց ներկայացումը: Պատկերները և ոչ թե փաստերն են ծառայում նրան որպես պատմական արժույթ»<sup>58</sup>: Եվ «պատկերների» ու «ներկայացման» համապատկերում էլ տեղի է ունենում իրականության և պատմության (պատմական տեքստի) միջև խզումը: Խզում, որի համապատկերում Հայոց ցեղասպանությունը վերակերպվում է հիշողության՝ այն դեպքում, երբ հայությունը 1915 թվականին ենթարկվել է ոչ միայն ու պարզապես Ցեղասպանության, այլև հայրենազրկման (Patricide): Իսկ ըսդհանուր առմամբ՝ պատմական կամ պատմագիտական մի տեքստի խզումն արտատեքստային իրականությունից և փոխադրումը հիշողության ոլորտ՝ ուղեկցվում է իրականության փոխարինմամբ. **պատմագիտության համար սա նշանակում է ընդամենը թվայցալ իրավիճակային առավելություն և խաղային էֆեկտ:** Հակադրության ու ստորակարգման այդ համապատկերում Հայոց ցեղասպանությունը դիտարկվում է իբրև հիշողություն՝ պարզունականացնելով և հարցականի տակ դնելով նրա գոյությունը (այն դեպքում, երբ Հայոց ցեղասպանությունը եղել է և է պատմություն):

Սակայն, հիշողութենականացնելով պատմական փաստը՝ Պ. Նոռան անտեսում է նաև այն հանգամանքը, որ այդ փաստը Ֆրանսիայում իրավական ծևակերպում է ստացել 2005 թ.: Ուրեմն կարելի՞ է ասել, որ Հայոց ցեղասպանության ձանաչման օրենքը<sup>59</sup> ևս Պ. Նոռայի համար դաշնում է հիշողություն: Ակնհայտ է, որ պատմության հիշողութենականացման և

56 **P. Nora**, Historical identity in trouble” , URL//: [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=152&Itemid=182&lang=en](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=152&Itemid=182&lang=en) (13.01.2013).

57 **Ibid.**

58 **P. Hutton**, op. cit., p. 149.

59 Տե՛ս **Loi no 2001-70** du 29 janvier 2001, JO no 25 du 30 janvier 2001.

հիշողության դերի անտեսման միտումների գերակշռությունը ողբերգական իրավիճակների, տվյալ դեպքում «մարդկության դեմ հանցագործության» համապատկերում ներկայանում է բոլորովին այլ լույսի ներքո: Մի բան, որ հատկապես ակնառու է Ա. Հիտլերի ձևակերպումը վերլուծելիս. «Ես այժմ Արևելք եմ ուղարկում իմ «մահվան ջոկատները», որոնց հրամայված է առանց խղճահարության ու ներողամտության սպանել լին ցեղին պատկանող և լեհերեն խոսող բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաներին: Միայն այս ձանապարհով մենք կշահենք այն կենսական տարածքը, որ մեզ անհրաժեշտ է... Մի վախեցեք պատմության դասից: Ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածը»<sup>60</sup>: Այսու՝ կազմակերպված բռնության գլխավոր նպատակն է ոչ միայն զրիերի ոչնչացումը, այլև (ինչպիսին էլ որ լինեն դրանք) հետքերի, նրանց մասին հիշողության ոչնչացումը: Եվ նրա իսկական հաղթանակը ոչ թե սպանվածների մահն է, այլ կենդանի մսացածների լույթունը: Քանզի Ժ. Բոդրիյարի այնդմամբ՝

«Ընչացման մոռացումը ոչնչացման մաս է, քանի որ դա նաև հիշողության, պատմության, սոցիալականի ոչնչացումն է և այն: Այդ մոռացումը նույնան էական է, որքան իրադարձությունը, որն ամեն դեպքում անորսալի է մեզ համար, անհասանելի է իր ձշմարտության մեջ: Եվ այդ մոռացումը նաև միանգամայն վտանգավոր է. այն պետք է ջնջել արհեստական հիշողության միջոցով (այսօր ամենուր արհեստական հիշողությունները լվանում են մարդկանց հիշողությունը, լվանում են մարդկանց իրենց սեփական հիշողությունից)»<sup>61</sup>:

Այստեղ է, որ ի հայտ են գալիս հիշողության և պատմության խզման հետևանքները. խզում, որը պետք է հաղթահարվի՝ «հանուր բարիքին» հիշողության և պատմության լծորդմամբ: 8. Տոդորովի դիպուկ ձևակերպմամբ՝ «Պատմագետի աշխատանքը, ինչպես ցանկացած այլ աշխատանք, որը վերաբերում է անցյալին, ոչ միայն փաստերի հաստատման մեջ է, այլև դրանցից ավելի ցուցադրականների և նշանակալիների ընտրության, իսկ այնուհետև դրանք միմյանց համադրելու. իսկ փաստերի ընտրության և համադրության այդ աշխատանքը անխուսափելի հորեն կողմնորոշում է ոչ թե ձշմարտությունը, այլ բարիքը»<sup>62</sup>:

2. Իր վերոբերյալ թեզերն ավելի ամրապնդելու համար Պ. Նոռան փորձում է Հայոց ցեղասպանության հարցը քննարկել ավելի տեղային (լոկալ) և ոչ թե ընդգրկուն (գլոբալ) մակարդակում: Հրեականի դեպքում նա նշում է իբր՝ Ֆրանսիայի անուղղակի մասնակցությունը, իսկ Հայոց Ցեղասպանության դեպքում ոչ մի մասնակցություն.

«Հարկավ, ոչ ոք չի ժխտում այն փաստը, որ սովոր մահացել են վիթխարի քանակությամբ մարդիկ, բայց Փրանսիական խորհրդարանը չէ, որ պետք է որակավորի այդ իրադարձությունները. դա հակասում է պատմության ոգուն: Երկու պատճառով.

Առաջին՝ արդի բարոյական հղացքները չեն աշխատում պատմության ոլորտում: Եթե դատենք անցյալի մասին՝ կիրառելով նրա նկատ-

60 *Akten zur Deutschen Auswärtigen Politik 1918–1945*, Serie D, Band VII, (Baden-Baden, 1956), pp. 171–172.

61 J. Baudrillard, *Simulacra and simulation* /translated by Seila Faria Glaser/, The University of Michigan, 1994, p. 49.

62 Tz. Todorov, *Les Abus de la mémoire*. Paris, Arléa, 1995, p. 150.

մամբ արդի բարոյական չափանիշները, այդժամ ողջ պատմությունը կարող է ներկայանալ իրեն հանցագործությունների պատմություն։ Այդժամ ինչ ուսուցանել երեխաներին։

Երկրորդ՝ մենք խիզախում ենք ըսկնել նշանավոր պատմագետ Մարկ Բյորկի բնորոշմամբ՝ «Ժամանակավիճակության (anachronisme) աններելի մեղքի մեջ» (այլ ժամանակների և այլ մշակույթների մարդկանց վերագրել վարքի հուզական դիրքորոշում և նորմեր, որոնք հատուկ են ինքնին պատմագետին և իր ժամանակներին»<sup>63</sup>:

Ստացվում է՝ Հոլորդաստին վերագրվում է գլորբալ արժեք՝ իր պարունակած դասի տեսանկյունից, իսկ Հայոց ցեղասպանությանը՝ ոչ, այն դեպքում, երբ ծագումով հրեա Ռ. Լեմկինը սկզբում հենց Հայոց ցեղասպանությունը նկատի ունենալով է ձևակերպել «ցեղասպանություն» հասկացությունը՝ դարձնելով այն իրավաբանական եզրույթ<sup>64</sup>:

Մինչույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ պատմական հիմնախնդիրը հրնացաց հետազոտության ձևակերպվում է՝ ենելով արդիականությունից: Ըստմին՝ անցյալի պատմությունը չպետք է տարանջատվի արդիականությունից, քանի որ արդիականությունն ի գործ է պատմագետի առջև բացելու անցյալի հեռանկարն իր ողջ խորությամբ ու ընդգրկությամբ<sup>65</sup>: Իսկ այս դեպքում հարկավոր է զգույշ լինել ոչ միայն «ժամանակավորական» անսերեկի մեղքի մեջ» ընկնելուց, այլև՝ որ արդիականությունն «իր տակ չզգմի» անցյալը, չլուցնի անցյալի ձայնը: Հակառակ դեպքում պատմագիտությունը կարող է վերասերվել «քաղաքական պատվերի», որի դեպքում «պատմական ճշմարտությունն իր տեղը գիծում է, այսպես կոչված՝ առօրեական պատշաճին» իր անհատական և հասրութային դրսնորումներով»<sup>66</sup>:

Տեղայնացմամբ («քայլ ֆրանսիական խորհրդարանը չէ, որ պետք է որակավորի այդ իրադարձությունները») Պ. Նոռան դիմում է **կեղծակերպության** (**սիմուլյացիայի**). շրջափոխություն է կատարում «համամարդկային» և «զուտ Ֆրանսիայի» միջև, ինչը կեղծակերպության տարատեսակ է<sup>67</sup>: Այս համապատկերում Պ. Նոռայի հիշյալ պնդումը հանդես է գալիս լիակատար պայմանականությամբ, այն է՝ արտահայտության և բովանդակության հարաբերությունը պայմանական է: Ասույթը կարող է և ծշմարտության արտահայտման միջոց լինել, և ոչ-ծշմարտության: Արտահայտման պլանն անջատելու և ցանկացած այլ բովանդակության միացնելու հարավորությունը ասույթը վկանգավոր գործիք է դարձնում, հարմար կուտակիչ տոցիալական ստի համար: Այսու՝ տեղի է ունենում շրջափոխություն, որի արդյունքում կորսվում է կապը անմիջական իրականության հետ: Այս

**63 П. Нора:** «Историки поняли, что законы – очень опасная вещь» URL:// <http://urokiistorii.ru/current/view/2010/31/nora-ut> (26.01.2013).

<sup>64</sup> Stiu Raphael Lemkin, Axis rule in Occupied Europe: Laws of Occupation – Analysis of Government – Proposals for Redress, Washington, D.C.: Carnegie Endowment for International Peace, 1944, pp. 79 – 95.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱռավարության կողմէն հայտադրությունը պատճենաբանության դաշտում առաջին անգամ արդի պատմագիտական դպրոցը՝ ՀՀ Ազգային մանրամասն տես Ա. Հովհաննիսյան, Աննալիների պատմագիտական դպրոցը. Լուսաւեն Ֆերի և Մարկ Բյուլի պատմության տեսությունը, Վէմ, 2011, թիվ 2 (34) ապրիլ-հունիս, էջ 95-118:

<sup>66</sup> Ա. Ստեփանյան, «Պատմությունն իրքս տերսու (մեկնության և գրության հնարավորություն), «Պատմություն և կրթություն», խմբ. Ա. Ստեփանյան, Եր., «Զանգակ-97», 1-2 (2005), էջ 11-12:  
67 Տե՛ս J. Baudrillard, op. cit., p. 121.

Է՛ տեղի է ունենում պայմանականության աննախադեպ ընդլայնում, որի համապատկերում բուն իրականությունը շրջափոխվում է պայմանական իրականության:

Ավելին՝ չպետք է մոռանալ, որ ֆրանսիան պարզապես աշխարհագրական հասկացություն չէ, ֆրանսիան պարզապես ֆրանսիական խորհրդարանը չէ, ֆրանսիան նախ և առաջ՝ **քաղաքակրթություն** է: Ավելին՝ ֆրանսիան համամարդկային հիշողության մի տեղ է, որտեղ իրականություն է դառնում ժողովրդավարությունը, ձևավորվում և արտահայտություն են ստանում ազատությունն ու արդարությունը՝ հանուն պատմության: Ահա այս ամենի անտեսման արդյունքում է «մարդկության դեմ կատարված հանցագործությունը» վերածվում է մեղմասացության, անգամ շրջանցման դեպքի: Այստեղ տեղին է հիշել Պ. Ռիկյորի վերը բերված միտքը. «Հիշողության հանձնառությունը (devoir de mémoire) հուշի (souvenir) միջոցով արդարադատության իրականացման պարուն Է՛ ուրիշի, քան սեփական եսի (soi) նկատմամբ»<sup>68</sup>: Արդարադատություն, որը հիշողության հանձնառությանը տալիս է ապագայի և պահանջի ձև:

3. Այս ամենի հետնախորքում Պ. Նոռան փորձում է միմյանց հակադրել Հայոց եղեռնն ու հրեական Շոան՝ առաջինի դեպքում բացառելով ցեղասպանության հնարավորությունը: Արդյունքում ձևավորում է ցեղասպանությունների մի աստիճանակարգ, ըստ որի՝ հրեական Հոլոքոստը «բացառիկ, եզակի երևոյթ է», իսկ Հայոց ցեղասպանությունը՝ «սովորական» (նկատենք, որ ստորև բերվող մեջքերման մեջ ևս շոշափվում են խնդրի գլորալ և տեղային (լոկալ) մակարդակները, որի մասին խոսել ենք վերը).

«Հիրավի, այս օրենքում գոյություն ունեն երկու շատ տարբեր դիտանկյուններ. հայկական հարցը, որի վրա կենտրոնացել են, և ավելի կարևոր նշանակություն ունեցող դիտանկյունը, որն ընդգծված չէ:

Հայկական կողմի դեպքում՝ բանը պարզ է: Պատմական գուգահեոր հայկական «ցեղասպանության» և Շոայի միջև, որն արդարացնում է ֆրանսիական օրենսդրության հավասարեցումը հրեական ցեղասպանությունը վհճարելողների համար 1990 թ. տուգանք սահմանող Գեյսոյի օրենքին (*Loi Gayssot*, [իննություն] չի բռնում: Շոայի համար, իրոք, Վիշիյական ֆրանսիայի պատասխանատվությունն անուղղակիորեն խառն է, այնժամ, եթե Հայաստանի դեպքում ֆրանսիան ոչ մի կապ չունի: Եվ եթե խոսքն այն մասին է, որ ձնշում գործադրվի Թուրքիայի նկատմամբ, արդյունքը համոզիչ չէ. Ֆրանսիական որոշումը կարող է միայն սրել թուրքական ազգայնականությունը և արգելափակել անցյալի ձանաչման առաջխաղացման ցանկացած ձև:

2005 թվականին Թուրքիան առաջարկել է ստեղծել պատմաբանների երկխորհմ հանձնաժողով և բացել արխիվները: Հայերը մերժեցին իրենց կատահության անունից՝ ցեղասպանությունը եղել է և, հետևաբար, ոչինչ չկա ավելացնելու, ինչպես եթե առանձին բառն ազատվեր իրերի կարգը հետազոտելուց: Ֆրանսիական կառավարությունը պետք է ձնշում գործադրի, որ Անկարայի համար կարգվի միջազգային մի հանձնաժողով, և Թուրքիան պարտավորվի հետևելու եզրակցություններին»<sup>69</sup>:

68 P. Ricoeur, op. cit., p. 108.

69 P. Nora, Loi sur les génocides: une bataille perdue, pas la guerre, URL//: [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr) (17.06.2012).

Հարկավ, Հայոց ցեղասպանության և Հրեական Հոլոքոստի համեմատությունը կարող է բացահայտել այս երկու իրադարձությունների խորունկ և այլորեն անհասանելի կողմերը, բայց, միևնույն ժամանակ, անզգույշ կիրառելու դեպքում նման համեմատությունը կարող է դառնալ հազե՞ապ կամ սխալ մտահանգումների աղբյուր, ինչը տեսնում ենք <sup>Պ</sup>. Նոռայի մոտ: Պատմական հիշողության մասին քննարկումն այստեղ ձևակերպվել է աստիճանակարգային-հեգեմոնային հարաբերությունների լեզվով: Միևնույն ժամանակ՝ <sup>Պ</sup>. Նոռան նկատում է, որ լուրջ պատմագետը պետք է շատ զգուշորեն ձևակերպի «ցեղասպանություն» հասկացությունը, քանի որ այն «մոգական առլրա» (aura magique) ունի, և նախընտրում է «ոչչացում» (anéantissement), «քնածնում» (extermination), «զանգվածային հանցագործություններ» (crimes de masse) հասկացությունները<sup>70</sup>: Սա հատկապես անհասկանալի է, եթե բաց է մնում հարցը, թե ինչպես է, որ հրեական Շոայի (Հոլոքոստի) ժխտումը կարող է դիտվել քրեորեն դատապարտելի, իսկ Հայոց ցեղասպանությունը՝ ոչ: Դա ակնհայտ է նրա հետևյալ ձևակերպման մեջ. «Մենք, օրինակ, երբեք չենք խնդրել վերացնել Գեյսոյի օրենքը, այլ միայն պահել ենք, որ այն դարձել է նախատիպար այլ օրենք-ների համար, որոնք մենք անհաջող ենք համարում»<sup>71</sup>:

Պ. Նոռայի վերոնշյալ դիտարկումներից կարող է բխել, որ դատապարտող վերաբերմունքի չեն արժանանում երիտթուրքական կառավարությունն ու գաղափարախոսությունը, որի առկայության դեպքում հնարավոր կլիներ «հաղթահարել անցյալի բեռը» երկուատեր (թե՛ թուրքերի և թե՛ հայերի կողմից), առանց որի հնարավոր չէ նորի կառուցումը։ Այս համապատկերում է, որ ակնհայտ է դառնում անցյալի «Վերաբննության» վտանգավոր այն կողմը, երբ պատմական օրյեկտիվության քողի տակ տեղի է ունենում երիտթուրքականության (այլ կերպ՝ հանցագործության) **ռեարիլիտացիա**, այն է՝ արդարացվում է «մարդկության դեմ կատարված հանցագործություն»։

««Մարդկության դեմ հանցագործություն» հասկացությունը ստեղծվել է արդի իրադարձությունների համար, որոնք ի գորու չեր տեղափորել բանականությունը և որոնք այնքան հրեշտակոր ու մասշտարային էին, որ չեն զետեղվում ոչ մի իրավաբանական կատեգորիայի ներքո: Դա բնորոշում էր ներկան և չեր վերաբերում ոչ հուշերին, ոչ հիշողությանը, ոչ անցյալին: Ինչ վերաբերում է Գեյսոյի օրենքին՝ ընդունված իրեն Ֆորեսանի նեզացիոնիզմի արձագանք, այն ուղղված չեր պարմագեւներին, այլ պարմական կեղծիրի ակրիվիականներին (կրկնակի բնդգծում մերը է - Ս. Հ.):

Գեյսոյի օրենքի (loï Gayssot) շարունակություններով և մարդկության ղեմ հանցագործությունների ընդարձակող մեկնություններով ընկնում ենք կրկնակի թակարդ. օրենքի ռետրոակտիվ ընդունում և անցյալի ամբողջական վիկտիմիզացիա:

Օրենքի ռետրոակտիվ ընդունումը և վաղեմության ժամկետի բացակայությունը, որոնց վրա կառուցվել է Նյուրենբերգի վճիռը, իսկ ապա՝ 1964 թ. օրենքը, ինչպես նաև Գեյսոյի օրենքը, որը հղում է անում նրանց վրա, սահմանափակված էին նացիստական հանցագոր-

70 Stu **Ibid.**

**71 П. Нора:** «Историки поняли, что законы – очень опасная вещь», URL:// <http://urokiistorii.ru/current/view/2010/31/nora-ui> (26.01.2013).

**ծությունների շրջափուլով:** Օրենքի հետադարձ ուժը տարածվում էր սուկ հինգ-վեց տարի առաջ եղածի վրա: Մի քանի տարվա ընթացքում մենք կարողացանք այդ վեց տարիներից հասնել մինչև վեց դարեր»<sup>72</sup>:

Նախ՝ նկատենք, որ «Պատմությունն ընդամենը մարդկության դեմ հանցագործությունների երկար շարան է»<sup>73</sup> պնդումն իր մեջ միաժամանակ ներառում է կեղծ հիմնախնդիր, այն է՝ միտումնավոր կառուցվածք (ավելի հավանական է՝ շրջանցման-քողարկման փորձ): Անհասկանալի է մնում այն հարցը, թե ինչպես է հնարավոր Հոլոքոստի դեպքում «Այն ուղղված չէր պատմագետներին, այլ պատմական կեղծիքի ակտիվիստներին» պնդումը, երբ Հայոց ցեղասպանության դեպքում անազատ վիճակում հայտնվում են պատմագետները: Այն դեպքում, երբ խոսքը բոլորովին էլ «անազատ վիճակում հայտնված» պատմագետի մասին չէ, այլ Հայոց ցեղասպանության, որը, հետևելով Պ. Ռիկոյրին, «կարելի է խնդրարկել, բայց ոչ ժխտել»<sup>74</sup>:

Այս համապատկերում ուշագրավ է նաև Պ. Նոռայի մեկ այլ պնդում-եզրակացությունը ևս. «Պատմական գույքահեռը հայկական «ցեղասպանության» և Շոայի միջև, որն արդարացնում է ֆրանսիական օրենսդրության հավասարեցումը հրեական ցեղասպանությունը վիճարկողների համար 1990 թ. տուգանք սահմանող Գեյսոյի օրենքին (**loi Gayssot**), [քննություն] չի բռնում»<sup>75</sup>: Այստեղ, խորամուխ չինսելով հարցի իրավաբանական կողմի մեջ (ինչը մեր խնդիրը չէ), հարկ ենք համարում Պ. Նոռային հիշեցնել 1968 թ. ՄԱԿ-ի ընդունած կոնվենցիայի այն հատվածը, որտեղ ուղղակիորեն նշվում է, որ վաղեմության ժամկետը չի կարող կիրառվել Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության և Ցեղասպանության մասին կոնվենցիայում նշված հանցագործությունների նկատմամբ՝ «անկախ նրանց ժամանակից»<sup>76</sup>:

4. Միմույակի մեկ այլ օրինակ է, երբ Պիեռ Նոռան «Ազատություն հանուն պատմության» կազմակերպության անունից հայտարարում է.

«Պատմությունը կրոն չէ: Պատմաբանը չի ընդունում և ոչ մի դոգմա, չի մեծարում և ոչ մի արգելք, չի ճանաչում տարու: Նա կարող է անհանգստանալ:

Պատմությունը բարոյականություն չէ: Պատմաբանի դերը գովարանելը կամ դատապարտելը չէ, այլ բացատրելը:

Պատմությունը այժմեականության ստրուկը չէ: Պատմաբանն անցյալը չի երեսապատում ժամանակակից զաղափարաբանական սխեմաներով և չի ներմուծում երբեմնի իրադարձությունների մեջ այսօրվա դյուրագգայունությունը:

Պատմությունը հիշողություն չէ: Պատմաբանը, գիտական ընթացքի մեջ, հավաքում է հիշողություններ մարդկանց մասին, դրանք հա-

72 P. Nora, Historical identity in trouble”, URL//: [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=152&Itemid=182&lang=en](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=152&Itemid=182&lang=en) (13.01.2013).

73 *Ibid.*

74 P. Ricoeur, La Mémoire, l’Histoire, l’Oubli, Paris: Le Seuil 2000, p. 648.

75 P. Nora, Loi sur les génocides: une bataille perdue, pas la guerre, URL//: [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=164%3Aloi-sur-les-genocides-une-bataille-perdue-pas-la-guerre&catid=53%3Aactualites&Itemid=170&lang=fr) (17.06.2012).

76 Конвенция о неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества, URL//: <http://www1.umn.edu/humanrts/instree/Rx4cnaslw.html> (24.04.2012).

մենատում է միմյանց հետ, համադրում է փաստաթյուրի, օրեկտների, հետքերի հետ և հաստատում փաստերը: Պատմությունը հաշվի է առնում հիշողությունը, [բայց] այն չի հանգեցնում դրան:

Պատմությունը իրավաբանական օրյեկտ չէ: Ազատ Պետության մեջ ոչ Պաղամենտը, ոչ էլ դատական իշխանությունը չպետք է սահմանեն պատմական ձշմարտությունը:

Հենց այս սկզբունքների խախտումն են հաջորդական օրենքների հոդվածները՝ մասնավորապես 1990 թ. հուլիսի 13-ի, 2001 թ. հունվարի 29-ի, 2001 թ. մայիսի 21-ի, 2005 թ. փետրվարի 23-ի օրենքները, [որոնք] սահմանափակեցին պատմաբանի ազատությունը՝ պատժամիջոցի սպառնալիքի ներքո ասելով, թե ինչ պետք է նա փնտի և ինչ պետք է գտնի, նրան պարտադրեցին մերողներ և սահմաններ գծեցին: Մենք պահանջում ենք լուծարել դեմոկրատական վարչակարգին անհարի օրենսդրական կարգը»<sup>77</sup>:

Տեքստն այնպէս է ձևակերպված, որ կարծես Հայոց ցեղասպանության ժխոտմը քրեականացնող օրինագծին կողմ արտահայտվողները դեմ են վերոբերյալ պնդումներին: Նախապէս նկատենք, որ վերոհիշյալի ներք կստորագրի ցանկացած լուրջ պատմագետ: Իրականում, սական, այստեղ ևս տեղերի վերադասավորում կա. **ակնհայտ է**, որ ոչ **Պատրամենտը** և ոչ **Էլ դատական իշխանությունը** չեն սահմանում «պատմական ճշմարտությունը», այլ «պատմական ճշմարտությունն» է, որ դարձել **է օրենք**: Այս պարագային՝ օրենքը հանդես է գալիս իրքս «հիշողության տեղանքը». ընդ որում՝ այնպիսի մի վայր, որն արդեն պատմություն է: Եվ եթե հին ժամանակներում (օրինակ՝ հին հույները) անմոռանալին մոռանալու համար վկայակոչում էին կրոնը, ապս մեր օրերում իրավիճակը թիշ այլ է. կրոնին փոխարինում է օրենքը (ինչպես բազմաթիվ հանցագործությունների դեպքում): **Միշշեռ «հիշողություն» և «պատմություն»** բնենուների լծորդումը տեղի է ունենում ոչ միայն պատմագիտության, այլև օրենքի և արդարադատության ոլորտում, որտեղ իրականանում է օրյեկտի՝ Հայոց ցեղասպանության, և սուրբեկտի՝ խնդրաբարկողի դինամիկ հավասարակշռությունը:

## Եզրակացություններ

Ի մի թերելով վերն ասվածը՝ նկատենք, որ պատմությունից վտարված հիշողությունը հոգերանական, անհատական, թանգարանային նմուշ է, որն ի վիճակի չէ նոր հաղորդակցական-տեղեկատվական հոսքեր ստեղծելու: Այն է՝ հիշողությունը պատմության մեջ աշխատող մեխանիզմ է, անընդհատ այլացող իրականության մեջ ինքն իրեն ստեղծող և նոր տեղեկույթներ արտադրող: Իսկ անցյալի մասին տարբեր պատկերացումների բախումները ոչ միշտ են քաղաքական բնույթ կրում. դրանք կարող են տեղի ունենալ ամենատարբեր մակարդակներում: Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի դեպքում պատմություն դարձած հիշողությունն ի պահ է տրվում օրենքին: Արդյուն

<sup>77</sup> L'appel du 12 décembre 2005, URL:// [http://www.lph-asso.fr/index.php?option=com\\_content&view=article&id=2&Itemid=13&lang=fr](http://www.lph-asso.fr/index.php?option=com_content&view=article&id=2&Itemid=13&lang=fr) (24.04.2012).

**քում՝ կոլեկտիվ հիշողության մեջ կուտակված բացասական էներգիան պարպես է և չի գործածվում ի չարս:**Մի կողմից՝ դա փոխհասկացման, մեկնարանության, իսկ մյուս կողմից՝ զղշման ու փոխհատուցման ուղին է: Այս պարագային Հայոց (և ընդհանրապես) ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը անհրաժեշտ քայլ է, որին հղվելով՝ կատարվում է ձերբազատում «անցյալի բերից»: Շնորհիվ դրա՝ մի կողմից՝ խնդրականացվում է ազգային տագնապը, մյուս կողմից՝ համամարդկային տագնապը:

Օրենքին փոխանցված պատմական ծշմարտությունը (Հայոց ցեղասպանությունը) շարունակում է մի աշխատանք, որն սկիզբ է առել մեկ այլ տեղում (Գեյսաոյի օրենքը) և որը ողջ հասարակությունն իրականացնում է յուրաքանչյուրի հանդեպ՝ արդարության հաստատման անթիվ մեխանիզմների միջոցով:

Ստացվում է, որ հայկական կողմը բոլորովին էլ դեմ չէ պատմության ազատությանը, այլ կողմ է արդարադատության շարունակականությանը, որին խոչընդոտում է Պ. Նոռայի կողմից կազմակերպված «Ազատություն հանուն պատմության» կառույցը: Այլ կերպ ասած՝ շեշտադրումը կատարվում է մինչև օրենքի ոլորտ ժողովրդավարության սահմանների ընդարձակման անհրաժեշտության վրա: Իսկ դա նշանակում է և ժողովրդավարության, և օրենքի սահմանների ընդանում: Մյուս կողմից՝ պատմական ծշմարտությունը (Հայոց ցեղասպանությունը) ի պահ տալով օրենքին՝ ստիպված ենք լինում գտնել այն ուղին, որը հայության համար գալիքը կրացվի ոչ թե բացասական արժեքանության, բացասական ինքնության հետանկարում, այլ դրական, կյանքի, որն այլ է, քան առկա կյանքը: Ստացվում է, որ Հայոց ցեղասպանության ժխտման դեմ պայքարում Օրենքի կերպարանքով ներկայացնող պատմությանը Պիեռ Նոռան հակադրվում է իրեն իրեն իրավունք ներկայացնող՝ անարդարությունը:

Ուրեմն՝ պատմությունն ու օրենքը միմյանցից բաժանում է ոչ այնքան օրինախախտումը, որքան անարդարությունը: Անարդարություն, որը բխում է հանուն ազատության պայքարի քողի տակ պատմության հանդեպ աստիճանակարգված վերաբերմունքից:

## Summary

### HISTORY AND MEMORY

The problem of hierarchization of genocides according to  
Pierre Nora

Smbat Kh. Hovhannisyan

The article is an attempt to analyze in general outline and by some main accents Pierre Nora's concept about the bill of criminalization of Armenian genocide's denial in France. On one hand it is considered in the overview of his

theory about “memory and history” and on the other hand – in the general overview of theories about history and memory.

It's notable that P. Nora makes reasonable connections between the idea of freedom and the freedom of history (consequently also historiography), where this principle is very important and perspective. Though, some of his approaches impede the structural discussion concerning memory and commitment. First of all, we mean not only the weakness of his arguments on the bill of criminalization of Armenian genocide's denial, but also the denial of the genocide as history, moreover, the contrasting of Armenian genocide with Holocaust and the determination of gradation between them, even in the case when Armenians were not only subjected to Genocide in 1915, but also to Patriicide (depatriated).